

ՄԱՅԻՍ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խորագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисе, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բաւին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տ. Ե. Եղիսաբէթ խորագրատան իր որդոց հետ, Կատարին է Մանուէլեան,
Եղիսաբէթ Օհանէսեան և պ. պ. Բարսեղ խորագրատան և Յակոբ Յա-
րութիւնեան իր Ալէքսանդր, Արշակ և Տիգրան որդոց հետ, սրտի ցաւով
յայտարարում են իրանց ազգականներին և ծանօթներին առաջին իր անփոխարինելի
ամուսնու, երկուորեքը իրանց սիրելի եղբոր, և վերջիններն իրանց թանկագին փեսայ

Թ Ո Մ Ա Յ Գ Ե Ո Ր Գ Ե Ա Ն Խ Ա Ր Ա Ջ Ե Ա Ն Ի

մահը, որ տեղի ունեցաւ կիրակի, մայիսի 10-ին: Հոգեհանգիստը կը կատարվի երեքշաբ-
թի, երեկոյեան ժամը 7-ին, իսկ յուղարկաւորութիւնը չորեքշաբթի, առաւօտեան ժամը
10-ին, սեփական տնից, Փարս-Օրբելեան փողոց, № 30, դէպի Վանքի մայր եկեղեցին, և
այնտեղից Վէրայի դերեզմանատունը:

2—2

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Գտնէ այժմ հոգաբեր. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Վերադարձը մեր կեանքում. Նամակ Սամա-
րայից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լու-
րեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հին և նոր
լուրեր. Պատերազմ. Նմանի ապստամբու-
թիւնը. Նամակ Սանթրակից. Նամակ Պարս-
կաստանից. Նամակ Թիւրքիայից. ՀԵՌԱՅԻՐ-
ՆԵՐ. — ՏԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԳԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Գլխաւոր.

ԳՈՆԷ ԱՅԺՄ ՀՈԳԱՅԷԲ

Թիւրքահայ գաղթականների վերադար-
ձի մասին եղած կառավարչական կարգադ-
րութիւնից յետոյ՝ գաղթականները ար-
դէն պատրաստուած են հայրենիք վերա-
դառնալ: Այս օրերս Թիֆլիս գտնվող գաղ-
թականների մի խումբ, մօտ 50 հոգի,
արդէն ճանապարհ ընկաւ հայրենիք՝ Ալա-
տափայի և Կարսի վրայով: Տարակից չը
կայ, որ այդ խումբը բաղկացած էր այն-
պիսի գաղթականներից, որոնք ու է մի-
ջոցով հնարաւորութիւն էին ձեռք բերել
ճանապարհորդելու, բայց գաղթականների
մեծ մասը, չը նայելով իր ջերմ փափա-
զին հայրենիք վերադառնալ գրկված է
սպիտակ հնարաւորութիւնից, որովհետեւ նա
չունի նրաթական միջոց, չունի ճանապարհ

պարհաճախ, ուստի, հազուադէպ և
չը կայ մէկը, որից կարողանայ նոյն իսկ
պարտք տնել:

Կառավարչական կարգադրութեան հա-
մաձայն, Կովկասի կառավարչապետի տրա-
մարութեան տակ գտնված գուժարներից
ճանապարհաճախ պէտք է տրվի գաղ-
թականներին մի տարուց յետոյ: Դաւանդ-
ները չունեն միջոց և, որքան մէկը գի-
տնել, հայոց Բարեգործական ընկերու-
թիւնն ևս չէ հայթայթում գաղթական-
ներին այդ միջոցը, որովհետեւ, միակ դրա-
մագրութիւնը, որ ընկերութիւնը ունի իր
տրամադրութեան տակ գաղթականներին
օգնելու համար, այն է դանիական գու-
մարը, սպառված է արդէն:

Այժմ այդ միջոցը հայ գաղթականնե-
րին պէտք է հայթայթէ հայոց հաս-
տակութիւնը: Հայոց հաստակութիւնը,
պէտք է կրկին խնայողանայ, չը կարողա-
ցաւ ցոյց տալ իր տառապեալ եղբայրնե-
րին այն ջերմ և մարդասէր կարեկցու-
թիւնը, որ նրանք իրաւունք ունեն սպա-
սել: Հաստակութեան վրա ծանրանում
է բարոյական պարտաւորութիւն, գտնէ
այժմ, երբ գաղթականները պատրաստ-
վում են հրաժեշտ տալ մեզ, քաղցրացնել

զովրդի ցանկութեան, խորամանկութեան դի-
մաց: Նա ինքը պահպանողականների կողմից
առաջարկեց ընտրողական ընտրութիւն մի ծրագրի,
այդպիսով նա ուղղում էր գրաւել ժողովրդի հա-
մակութիւնը, առանց որի պահպանողականնե-
րը չէին կարող պահել կառավարութեան ղեկը
իրանց ձեռքում: Կառավարչական պաշտպա-
նեց օրինակիւ էր ամառի սրբազանութիւնների
և փոփոխութիւնների միջոցը նրա մէջ, որ օրի-
նակիւ էր դարձաւ մի շատ բաւարար, ազատա-
միտ օրէնք: Կրկին հարկադրված էր ընդունել
Կառավարչական ընտրութիւնները: Բայց
դա մի անբարոյական միջոց էր, որ տանալու-
ղական կուսակցութեան մէջ զայրույթ յարուցեց:
Լորէ Սօլբերգի անուանեց նրան արեւաբախ-
դիւր: Իսկապէս յաղթութիւն տանողները ազա-
տամիտներն էին, նրանք ինքնին պահպանող-
ականների ձեռքից այնպիսի մի ընտրութիւն, որ դէմ
էր նրանց դաւանած սկզբունքներին:

Ձեռք բաւականաւորով այդքանով: Կառավարչ-
ական մի այլ անպիսի գործ սկսեց: 1868 թ.ին նա
առաջարկեց համայնքների ժողովին ջնջել պե-
տական եկեղեցու իրաւունքները Երանդակայում:
Դա մի անակնկալ հարուած էր, որ պայթեց
անդիակական եկեղեցու զինին և ոտքի կանգնեց:
Ինչպէս կանգնեց կեղեցականութիւնը: Մենք տե-
սանք որ ինքը, Կառավարչական, մի ժամանակ շատ
հակառակ էր այդ մտքին: Բայց տարիների ըն-
թացքում նա եկաւ այն համոզման, որ կրօնա-
կան բռնապետութիւնը ամենամոթալի գործնե-
րից մէկն է: Իրանդակայի կաթողիկոսները, ինչպէս
գիտնեք, հարկ էին տալիս անդիակական եկեղե-
ցուն: Այդ անարդարութեան դէմ իրանդակ-
այի կաթողիկոսն էին մղում դարերից ի վեր: Օ'Կոնս-
տանու 1847 թ.ին, չը տեսնելով իր վարած
դատի վախճանը: 1848 թ.ին Երանդակայի յեղա-
փոխութիւն սկսեց, որ չափովեց: Այժմ երեսն
էին եկել ֆէյդները, յեղափոխական մի գաղա-
նի ընկերակցութիւն, որ դաշինք միջոցով էր
պահանջում արդարութիւն և իրաւունք: Եկեղե-

նրանց վերջին ժամերը, որպէս զի դաւ-
նացած սրտով չը հեռանան մեզանից:
Պաշար, ճանապարհահաճախ, հա-
զուադ, — ահա ինչ տեսակ օգնութիւն
պէտք է մատակարարել գնացող գաղթա-
կաններին: Եւ ամեն մի քաղաք, ուր գտն-
վում են գաղթականներ, պէտք է տեղի
ուստի օգնութեան ձեռք մեկնի նը-
րանց, մատակարարելով գնացողներին այն
բոլորը, ինչ հարկաւոր է երկար և ծանր
ճանապարհորդութեան պատրաստվող պան-
դուխներին:

Թոյլ ենք տալիս մեզ յուսալ, որ գտնէ
այս անգամ հայոց հաստակութիւնը կը
կատարի իր պարտաւորութիւնը. գտնէ
այժմ հայ գաղթականը եղբայրական կա-
րեկցութեան և մարդասէր վարմունքի մի
թելը յիշատակ կը տանի իր հետ գեղի
հայրենիքը, ուր, գուցէ, դեռ շատ փո-
քութիւններ սպասում են նրան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՂԱՐԱՆՈՐ ՄԵՐ ԿԵՆՏԻՈՆՄ

II

Եթէ վեղարը իրականապէս նշանակութիւն
չունենար ժողովրդի կեանքում, չը չիվէր նրա
հետ և նրա գործը լինէր միայն, ինչպէս պ.
Մարտիանին է ասում, «աղօթել վանքերում»,
այն ժամանակ ինչ փոքր մեզ, որ վանքերի կի-
սակերծան աւերակներում, բացի բուրբից և չըդ-
ջիկներից բնակութիւն են հաստատել և լոյսից
փակել մարդիկ... Որ վանքը, ինչպէս մի հիմ-
նարկութիւն, ինքն ըստ ինքեան, մեր հանգա-
մանքներում, չէ խանգարում մեծ ծառայութիւն
մատուցանել աղքատ դրան ապացոյց Աշտարա-
կեցին, Վարժապետեանը, Ալշանը, Այսրեանը
և շատ ուրիշ վանականներ, որոնց անունները
օգտակար, թէ և համեստ գործիչներն ինչ են
պատկանում:

Չէ կարելի բացարձակ պնդել, որ յիշեալ ան-

ձեւի գործունէութեան մէջ բնաւ նշանակութիւն
չեն ունեցել վեղարի հետ կապված որոշ պայ-
մանները, — մի զեպքում, օրինակ, օրէնքի տուած
լիազօրութիւնը, իսկ միւս՝ դուր ոյմեր կրանող
մանր մունք աշխարհային հոգսերից ազատ լի-
նելը: Մեր արդի աշխարհային կեանքը իր ա-
նարդար գոյութեան կուսով մի այնպիսի իրէա-
րական բան չէ ներկայացնում, որ նրանից հե-
ռանալը ինքն ըստ ինքեան արդէն պատարակե-
լի լինէր, եթէ այդ հեռանալու նպատակն է
ամբողջապէս նուիրվել ժողովրդի ծառայութեան
կամ գիտութեան: Իր սեփական բուն ի մասին
հոգ տանելու առաքնութիւնը և ծիծեռնակը ու-
նի. դա մի առաւելութիւն չէ, որով, դիցուեք, մի
աշխարհական նպատակ աւելի բարձր դառնար,
բան մի վեղարաւոր հայ գիտնական ժողովրդին
ծառայելու դադարաւոր վաւեր մի լուսաւոր
առաջնորդ պակաս օգտակար չէ, բան նոյնպիսի
մի փաստաբան, ինժեներ, կամ բժիշկ: Իւրաքան-
չիւրը գործունէութեան իր շրջանում կարող է և
վնասակար լինել, և օգտակար. իսկ եթէ վեղա-
րաւորը իրականապէս գործունէութեան ապարեզ
ունի, դա փաստ է, որի հերքումը հակառու-
թեան մէջ պէտք է գցի մեզ: Իմ բոլոր էու-
թեանը դէմ լինելով կղերականութեան, այնու-
ամենայնիւ համոզված եմ, որ ներկայ պայման-
ներում վեղարը կարող է, հրաժարվելով իր
դասակարգային շահերից և «աստուածաբանու-
թիւնից», մեծ ծառայութիւն մատուցանել մեր
ժողովրդին, որովհետեւ դրա համար նա ունի իր
հեռու մի անպիսի միջոցներ, որոնցից շատ
զեպքերում դուրի է աշխարհականը: Սո չեմ ա-
սում, որ վեղարը մի ակ գործածն է մեր կեանքի
մէջ, այլ թէ՛ նա ևս գործածն է:

Մարդկութիւնը, բայց առած անհատները, հա-
զարաւոր դարերի ընթացքում փոփոխել է իր
աստուածներին, իր հաւատը, բայց թէ երբ նա
ամբողջապէս կամ մեծ մասամբ իր աշխարհա-
յեցողութեանը Միւլ կամ Բրնաւի դառնայ՝
այդ ուսուցիչների գիտնալու բանն է. մենք
գիտենք, որ այժմ և դեռ երկար ժամանակ տի-

պանդական և կղերական տարրերի մէջ: Գը-
լադատունի անտանում էին դաւաճան Աստու-
ծու և թագուհու առաջ, ստոր մասին, որ ձեռք
է բարձրացնում Աստուծու ստացուածքների դէմ:
Գաւառներում լուրեր էին տարածում թէ Գը-
լադատունի դիւանար է և թշնամութիւն ունի ե-
կեղեցու դէմ: Բայց այդ անդ փոփոխել չը
կանգնեցրեց Կառավարչական, պարամիտոր ընդու-
նեց նրա առաջարկած օրինակիւ է Երանդակա-
յի կաթողիկոսները ազատվեցան անգլիկան եկե-
ղեցու լուծից:

Այնուհետեւ Կառավարչական մի քանի օրէնսդրական
միջոցներ էլ ձեռք առաւ իրանդակային դիւա-
ցիների ստեղծել գրութիւնը բարոյեցնել համար:
Աւելի նշանաւոր էին նրա դպրոցական ընտրու-
թիւնը. տարրական դպրոցները ազատվեցան կղե-
րականների խնամակալութիւնից, ժողովրդի կըր-
թութիւնը կանոնաւոր ընթացք ստացաւ: Մեզ
հետու կը տանէր այն բոլոր ընտրութիւններ ինչ-
պարզութիւնը, որոնք տեղի ունեցան 1870 և
1871 թ.ականների ընթացքում: Դրանք կենսա-
կան նշանակութիւն ունեցող օրէնքներ էին, ո-
րոնք հաստատում էին արդարութիւն և հաւա-
սարութիւն և համապատասխանում էին մի մեծ
և ազատ ազգի պատմին ու փառքին: Միակ
բանը, որ վնասում էր Կառավարչական միջնորդ-
ութեան, արտաքին քաղաքականութիւնն էր:

Մենք տեսնեք, որ աղքատի յարաբերութեան
մէջ Կառավարչական հետեւում էր արդարութեան և
բարոյականութեան սկզբունքներին: Այդ հան-
գամանքը միշտ վնասել է նրան: 1870 թ.ին
ծաղեց ֆրանս-պրուսական պատերազմը: Անդ-
լիան չէր զբոսնում պահպանեց, և երբ Ռուսաս-
տանը, օգուտ քաղելով այդ հանգամանքից, ա-
ռաջարկեց ջնջել Պարիզի դաշնադրութեան այն
յոյութեանը, որով Ռուսաստանը զրկվում էր Սև
ծովի վրա պատերազմական նաւեր պահելու ի-
րաւունքից, Կառավարչական չնդդիմացաւ, քանի որ
Գրիմի պատերազմի ժամանակ նա բոլորեւ էր
այդ հանգամանքի դէմ: Դա դժգոհութեան առա-

բերու են կարգեր, որոնք մեր իրական միջնա-
վայրն են կազմում: Թէև Եւրոպայում տիրում է
ընդհանուր կառավարող շարժումներ, թէև
նրա անկախ ժողովուրդները չափազանց
են գնացել, բայց համոզվելու համար թէ և այն-
տեղ եկեղեցին դեռ զօրեղ ազդեցություն ունի
կենտրոն մէջ՝ բաւական է մի պտուղտ այդ եր-
կիրներում... Սեկեղեցին իբրև որոշ մի կազմա-
կերպություն դեռ ունի բաւական կենսունակու-
թիւն, այդ կազմակերպությունը ժողովրդի հետ,
ինչպէս տեսանք, գործ ունի, ուստի անտարբեր
լինել թէ ովքեր են այդ կազմակերպությունն
անպատկառ յանցանք է ժողովրդի բարօրու-
թեան տեսակէտից: Մեզ համար չը պէտք է մի
և նոյնը լինի թէ ով է կաթողիկոս ընտրվել և
ազգի մեծամասնութեան ներկայացուցիչ: Թէ ով
է Պօլսի պատրիարքը, ովքեր են առաջնորդներ
թեմերում, ովքեր են սինոդի անդամներ, յա-
ջորդներ, ժողովրդի հետ խօսող քարոզիչներ,
վանքերի կառավարներ կառավարիչներ և այլն
և այլն: Այդ պաշտօններէից կարող է ազգի
համար և չարիք և բարիք առաջանալ. լուսա-
ւորը, ազնիւը, գործունեան և ձեռնհասը՝ ան-
պայման օգտակար են ժողովրդի համար և ընդ-
հակառակը շատ տուժել ենք և աւելի կը տու-
ժենք սգգաւ, աւաղակ, ծով և մոլորով ու կամբով
անդամարդ զառանգ վերաբարեկներէից:

Արդ, ինչպէս այս բոլորը իմանալով հանդերձ
խնտելիզնեցան իրան թոյլ տալ սանտարտու-
թեամբ ասել ժողովրդին. գնա խաչվիր ա-
նարծան հոգեւորական պաշտօնականի ձեռքից,
որովհետեւ մենք, խնտելիզնեցանք, ոչ մի կերպ
«չենք կարող և չը պէտք է» այդ պատկարգի
մէջ մտնել: Եթէ մեր խնտելիզնեցանք ամենից
բիւ մտածում է հասարակական գործերի վրա,
թողնելով նրանց պատահականութեան և իրերի
բնական հոսանքին և վաճառականի նման մե-
տածում է թէ ubi bene, ibi patria (այդ pat-
ria-ն հասկանալով ոչ այդքան տեղագրական
մտքով, որքան՝ դործունէութեան), եթէ նա
չու՜նի հասարակական խնտելիզնեցան մասին ո-
րոշ և հիմնաւոր համոզումներ և իրական պա-
հանջներին համապատասխան ծրագիր, եթէ
նա չու՜նի տոկոսութիւն ու եռանդ այդ ծրա-
գիրը իրագործելու, — թող նա չը դարձնայ,
որ վերջերս էլ այն չէ, ինչ կարող էր լի-
նել: Իսկ թէ անդալսել վերաբեր կարող էր ա-
ւելի օգտակար լինել՝ այդ պարզ է թէ եղած օ-
րինակներից և թէ, մասնաւոր մեր եկեղեցու
ընտրողական սկզբունքի խելացի գործադրու-
թիւնից, իսկ այդ սկզբունքի գործադրողը դարձնալ
խնտելիզնեցան է, որովհետեւ նա է զեկաւարդը,
ժողովուրդը նրան է լսում:

Լևոն Սարգսեանց

ջրն պատճառն էր: Երկրորդը և աւելի տարա-
փելին մի ուրիշ գործ էր, որ միայն պատիւ կա-
րող է բերել Ղազարոսին:

Ան թէ ինչ գործ էր դա: 1861—1865 թա-
կաններին Հիւսիսային Ամերիկայի Միացեալ
Նահանգներում բորբոքված էր յամառ պատե-
րազմ ստորակներն ազատութեան համար: Հա-
րաւային նահանգները չէին ուղում, որ ստրու-
թիւնը ջնջվի և ապտամբվեցան կառավարու-
թեան դէմ: Անգլիան միւս պետութիւնների նը-
ման չէրդ մնաց, բայց անպայման տարիներում
համակրում էր հարաւային նահանգներին: Այդ
ժամանակ Անգլիայում հիւզ մարտախաւեր պատ-
րաստվեցան հարաւայինների համար. դրանցից
մէկը, որի անունն էր «Ալբամա», կառավար-
վում էր անգլիական ֆիլեյնգերնով և ահպին
վնասներն պատճառեց հիւսիսային նահանգներին:
Ղա յանցանք էր միջպագային օրէնքների դէմ:
Անգլիան, իբրև չէրդ պետութիւն, իրաւունք
չու՜նէր օգնել կուռղ կողմերից մէկին: Ուստի
Միացեալ Նահանգների կառավարութիւնը պա-
հանջեց Անգլիայից «Ալբաման» նաւի պատճա-
ռած վնասների փոխարինութիւնը 100 միլիոն
բուրլո: Երկրա ժամանակ այս հարցը յազվում
էր երկու պետութիւնների մէջ և գնալով սպառ-
նայից կերպարանք էր ընդունում: Ղազարոսն,
հաւատարմ մնալով իր դաւանանքներին, ա-
ռաջարկեց վէճը յանձնել միջնորդ դատարանի
ընտրութեան: Դատարանները չէրդ և շահ չու-
նեցող երեք պետութիւնների (Շվեյցարիա, Ի-
տալիա և Բրազիլիա) ներկայացուցիչներն էին,
որոնք հաւաքվելով ժընեւում և ընելով երկու կող-
մերի ներկայացուցիչների բացատրութիւնը, 1872
թ. ամառը վճռեցին, որ Անգլիան 32 միլիոն
բուրլո տալ Միացեալ Նահանգներին: Ղազարոսն
այդ առիթով ասաց. «Որքան և ծանր լինի մեզ
վրա դրած տուգանքը, բայց եթէ ի նկատի ու-
նենանք թէ բարոյական որպիսի վնաս օրինակ
տուին երկու մեծ ազգերը, տուգանքը կը կորց-
նէ իր նշանակութիւնը: Երկու ազգեր, չը նա-
յած որ ամեն մէկը եռանդով պաշտպանում էր

ՆԱՄԱԿ ՍԱՄԱՐՂԱՆՈՒՑ

Մայիսի 6-ին

Այսօր առաւօտեան այտուղ հասաւ Արեւմտա-
կէս արեւելահայկոս Սեդրակեան: Սամարղանդի
հայ կոյնիւնի ամբողջովին դուրս էր եկել եր-
կաթնուղ կայարան, ուր հանդիսաւոր կերպով
ընդունեց իր հոգեւոր հիւրին: Սրբազանն իշխա-
նեց «Восточное Общество» ընկերութեան այտու-
ղի գործակալի մօտ: Սեդրակեանին այցելեց բա-
ղաքի ուսանողներէն: Այնուհետեւ սրբազանն
այցելութեան դնաց նահանգապետին, որն իր
կողմից փոխ այցելութիւն տուեց: Արեւմտակէս
արեւելահայկոսի այտուղ գալով — մեծ բարիք է
Սամարղանդի հայ կոյնիւնի համար: Մենք
զուրկ ենք «Կենդանի» խօսքը քարոզող քահանա-
յից. բացի դրանից, շատ անգամ է պատահել,
որ մեռած «արքայաներէն» քրիստոնէական ծէ-
սով լիազոր չէ եղել, իսկ այս կոյնիւն, որ օ-
րէցօր շատանում է, մի տարօրինակ վիճակ է
ներկայացնում. չը կայ հասարակական կենտրոն,
ամենքը կղզիացած՝ իրանց «ես»-ի շուրջն են
պտտում: Հարկաւոր էր մի հեղինակաւոր ձայն,
որ վերջ տար այդ տարօրինակութեան: Այսօր
այդ մասամբ կատարված ենք տեսնում, շնորհիւ
մեր առաջնորդի, որ յորդորել է Սամարղանդի
հայ կոյնիւնային ունեւոր սեփական եկեղեցի, ո-
րի մասին, ինչպէս գիտենք, ինքը նահանգապե-
տին խնդրել է: Խօսքը եկեղեցապատկան հող
ձեռք բերելու մասին է: Բացի դրանից, Սեդրա-
կեան խոստացել է մօտիկ ապագայում այտուղ
ուղարկել մի ուսեալ քահանայ: Սրբազանը, ինչ-
պէս լսեցինք, մտադիր է ճանապարհորդել դէպի
Պ. Ս.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՈՐԾԻԹԵԱՆ

Ատխարադ, մայիսի 8-ին

Ապրիլի 12-ին, Ատխարադի հասարակական
ժողովարանի դահլիճում, մենք, հայ թատրոնա-
սէրներս, ներկայացրինք «Սաթաբալ» կոմե-
դիան և «Օրթոմարի քեֆ» փողովոր: Դահլիճը,
ինչպէս ամեն մի ներկայացման ժամանակ, այս
անգամ էլ լի էր հայ ժողովրդով, որը միշտ հա-
մարում էր տալով դէպի թատրոնսէրները:
Տոմարիների վաճառումից դուրս 254 ռ. 65
կ., ծախս եղաւ 109 ռ. 53 կոպ., մնաց գում-
արները 145 ռ. 12 կ.: Խմբի որդման համա-
ձայն՝ ուղարկում են «Մշակի» խմբագրութեան,
յօդուս կարծու հայ ուսանողների և ուսանողու-
հիւնների՝ 50 բուրլո: Մնացած գումարը մասամբ
գործադրվել է և պիտի գործադրվի եկուր հայ
գաղթականների և անդալսի աղքատների օգտին:

Ատխարադի հայ թատրոնասէրների դիմաց՝
Բ. Տէր-Բաղդասարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անա մի քանի տեղեկութիւններ Թիֆլիս եկած
գերմանացի ուսումնականներ Բեկի և Լէմանի ճա-
նապարհորդութեան մասին: Թիֆլիսի շուրջը մի
քանի հնագիտական հետազոտութիւններ կատա-
րելուց յետոյ նրանք կողմնակի դէպի Գանձա-
կի գաւառում գտնվող Գետաբէրի գործարանը,
այնտեղից կանցան դէպի Նոր-Բայազէտ և Այ-
րիշայի սարահարթը, յետոյ կայցելեց Նրեան, Արա-
գած սարը, այնուհետեւ կերթան դէպի Նախիջ-
եան, Զուղա, կանցան Պարսկաստան. Սարմատից
երկու գիտնականները Ուրմիայի վրայով պիտի
գնան մինչև Վան, որտեղից կը վերադառնան
Եւրոպա: Նրանց նպատակն է ուսումնասիրել
բևեռ եւ գործեր և հին արձանագրութիւններ:
Բեկ առաջ էլ եղել է Անդրկովկաս և կատարել
է հետազոտութիւններ, որոնք արդէն լոյս են
տեսել գերմաներէն լեզուով: Ցանկալի է, որ
գիտնական հիւրերին մեր գաւառներում ցոյց
տրվէին ամեն տեսակ դիւրութիւններ և հիւրա-
սիրութիւն:

Լսում ենք, որ Թիֆլիսի մամուլի ներկայա-
ցուցիչների նախաձեռնութեամբ մտադրութիւն
կայ կազմակերպել մի ներկայացում, որի ար-
դիւնքը կը յատկացնուի սովատանջներին:

Երկուշաբթի, մայիսի 11-ին, Կորչի խումբը,
ի նպատակով. Սաշինի, խաղաց մի ծիծաղաշար
կոմէդիա Շէնտանի «HALLA KOSA NA KAMEN»-ը,
փութաղբէլ է գերմաներէնից: Կորչ: Պիւսի
մէջ դուրս է բերված՝ հարուստ և ազդեցիկ մարդ-
կանց փառն մնապարծութիւնը, որը խանդա-
րում է նրանց, չը նայած իրանց ընածին բա-
րութեանը, մարդավայել կենտր վարել և սիրով
վերաբերվել դէպի ուրիշները. սա բարբերի պիէս
է, այլ մի ուրախ հիւսուածք բեմական էֆէկտ-
ների: Խումբը լաւ խաղաց, մոռացնել տալով
թէ պիէսի պակասութիւնները և թէ բովանդա-
կութիւնը. մասնաւոր լաւ էին ինքը բեմեֆի-
ցիաները, ա. Վաշեկ և պ. Սվետլով, որը դա-
մանք է պատճառում մարդուն իր բազմակող-
մանի տաղանդով: Վերջ խաղացին մի գուռ-
ձայն փողովի՝ «Крепчайший въ кубѣ». Թատրո-
նում ժողովուրդը քիչ կար: Բեմեֆիցիանտին
հասարակութիւնը ընդունեց ծափահարութիւն-
ներով և մատուցեց ընծաներ:

ՎԱՂԱՐՇԱՊԱՍԻՑԻՑ մեզ գրում են «Երկու շա-
բաթ է, որ չարունակ անձրև է գալիս: Լա-
յոյսեր են տալիս ցանքերը: Սակայն եթէ անձ-
րևները չարունակվին, կարող են վնասվել ցո-

թողեց ազատամիտ կուսակցութեան պա-
րագլխի պաշտօնը, համարեա բոլորովին հե-
ռացաւ պետական գործերից: Դիւրաւելի յազ-
մութիւնը կատարեալ էր. «հանգած հրաբուխ-
ները», ինչպէս նա անուանում էր ազատամիտ-
ներին, կորցրել էին իրանց հեղինակութիւնը և
պահպանողականորէն տիրապետութիւնը անվը-
րով կը լինէր: Բայց Դիւլին սխալվում էր: Շու-
տով հանդամանքները ասպարէզ հրաւիրեցին
Ղազարոսին և Դիւլին տեսաւ, որ նա հանգած
հրաբուխ չէ:

1874 թականի վերջերում Թիւրքիայի Հեր-
ցեգովինա նահանգում տեղի ունեցաւ տոլուա-
կան երկրաշարժի մէկը: Հունձը վատ էր, հեր-
ցեգովինացիները հարկեր տալու ոյժ չու՜նին.
Թիւրքերը սկսեցին տանջել նրանց: Այս ան-
գամ անպատիժ չը մնացին այդ հարստահարու-
թիւնները: 1875 թ. Հերցեգովինայում ապս-
տամբութիւն բռնկվեց, որին շուտով միացաւ և
սահմանակից Բոսնիան: Արեւելեան հարցը դա-
ձնալ հրդեհակեց: Պետութիւնները միջամտեցին և
բէֆօրմներ պահանջեցին ապստամբված երկր-
ների համար: Կ. Պօլսում տեղի ունեցաւ յեղա-
փոխութիւն, որին զո՜հ դնաց սուլթան Սեդիկ-
Ալի: Այդ ընդհանուր խլրտումների ժամանակ
մայիսի 20-ին բոլորը հայրենասէրները, որոնք
հաւաքված էին Բալկանեան սարերում գտնվող
մի գիւղում, ապստամբութեան դրօշակ բարձ-
րացրին: Թիւրք կառավարութիւնը այդ գործին
պատասխանեց մի ահուկ կոտորածով: Բոլգա-
րիա ուղարկվեցան կանոնաւոր զօրքեր և բաշի-
բօզուկներ, որոնք սարսափելի դադաւնութիւն-
ներ գործեցին, սրի անցկացնելով միայն Ֆիլի-
պօպօլի վրայէն 12,000 մարդ: Եւրոպան ու-
չինչ չը գիտէր, անգլիական կառավարութիւնը
լուռ էր: Յունիսի 23-ին «Daily News» լրագ-
րում տպվեց Թիւրքաց գաղաւթութիւնների ա-
ռաջին նկարագրութիւնը. երեք օրից յետոյ պար-
լամենտում հարցաքննութեան եղան, որոնց
Դիւրաւելի պատասխանեց ցինիկական հանքնե-

բեմի արտերը և միջոց չը տալ բամբակի ար-
տերը ցանկուռ:

ԿՈՂՔԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 26-ին թա-
տերասէրները տուեցին մի ներկայացում յօղու
տեղական տարրական դպրոցի չքաւոր աշակեր-
տներ: Դահլիճը գրեթէ լի էր: Խաղից յետոյ ու-
սուցիչ Շահնապարեան կարդաց մի յօդուած ար-
բեցողութեան մասին: Նախ՝ մանրամասն
խօսելով այն մասին, թէ ինչպէս կործանիչ աղ-
ղեցութիւն տնին ողկից խմիչքները մարդու ա-
ռողջութեան ու նրա մոռուր ընդունակութիւն-
ները վրա, վերջում մասնաւորապէս խօսեց կող-
բեցիների մասին, որոնք, պէտք է խոստովանել,
Բաբուր ամենապիտեւանող երկրպագուներն թը-
ւում են գտնվում, ու յորդորեց նրանց՝ ձեռք
քաշել այդ վտանգաւոր մոլորութիւնից: Յոյս ու-
նեց, որ այդ ընթերցանութիւնը անհետանալ
չի անցնի»:

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Նորբար մեր դա-
ւաւապետ Գօլուբանով՝ քաղաքական բժիշկներ
հետ՝ ման եկաւ հայթիւնների խանութները:
Գտնելով կոյնիւնից Մազանիկ խանութում վատ
յատկութիւն պարունակող ալիւր, կոմիսիան
չէր թոյլ տալիս, որ նրա խանութում հաց ծախ-
վի: Սակայն այս օրերս ընտելով ալիւրների մի
քանի տեսակի կոմիսիան մի ալիւրից իր ներ-
կայութեամբ հաց հուցեց տուեց, իսկ բժիշկ
Աբրամովիչը հացը ինքը անձամբ թխել տուեց
փոխառանք և, համը տեսնելուց յետոյ, կարգա-
դրեց ծախել ֆունտը՝ 4 կօպէկով: Երէկվում
պատուով ստացվեց Բագուի նահանգապետի հաս-
տատված՝ քաղաքային ուղարկվալի տակսան,
միւսը այսօրվանից ծախվում է 8 կօպէկով: Ժո-
ղովուրդը ուրախ է»:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Շուշի երկաթուղի
է դալիս. այդպիսի աւետիք են տալիս մի-
մեանց հանդիպողները և մեծ-մեծ յոյսերով
սպասում, թէ ինչ նորանոր լուրեր են գալիս
Բագուից երկաթուղու մասին:—Եւ արդարեւ,
ինչպէս հաւատացնում են Բագուից ստացվող
նամակները, այնտեղ կազմվում է մի աւելի օ-
նեւոր կան ընկերութիւն՝ երկաթուղու դիմ
անցկացնելու: Նւրախից Շուշի: Ընկերութիւնը
նպատակ ունի, ինչպէս հաւատացնում են, որ-
քան կարելի է մօտեցնել դիմը քաղաքին: Աւե-
լի մօտեցնելու համար, մեր կարծիքով, երկու
ճանապարհ կայ. մէկը՝ Խանքենու դիմով պիտի
անցնի մինչև Զառսուտ լեռների լանջերը և այն-
տեղից պտուղի ու մանր քաղաքը «Երևանեան
դաշտ»-ի իսկ միւսը Շուշիքենդ ու Դուռնաբաղ
գիւղերի մէջտեղով պէտք է անցնի Հիւսիսի դը-

րով: Չը համարձակվելով ուրանալ իրողութիւ-
նը, նա սկսեց արդարացիել թիւրքերին և մի
չաքը խորամանկութիւններով ընացրեց պարա-
միտը, մինչև որ վրա հասան ամառային ար-
ձակուրդները: Պարսկմետը փակվեց, իսկ Դիւ-
րաւելի ստացաւ լորթ Բիկօնօֆիլդի տխուրը:

Բայց առաջին միջնորդի այդ անամօթութիւն-
ները անպատիժ չը մնացին: Վերկացաւ Ղազար-
ոսն և Անգլիան մի ծայրից մինչև միւսը դղը-
դաց զայրոյթի և բողբոջների աղալակներից: Ան-
թիւ միտինգներ գումարվեցան. Անգլիան հրա-
պարակով դատապարտում էր Թիւրքերին: Սեպ-
տեմբերին Ղազարոսն հրատարակեց իր հռչակա-
ւոր բրօշուրը, որի վերնագիրն է «Բօլգարական
սարսափներ և Արեւելեան հարց»:

Այդտեղ նա
մի ամբողջ ամբաստանալիք գետեղեց Թիւրքա-
մալ Դիւրաւելի-Բիկօնօֆիլդի դէմ, Թիւրքերին
անուանեց մարդկութեան թշնամիներ և հրաւի-
կարդաց անվտանգութեան աղբի խոճին և արդարու-
թեան: Կարճ միջոցում Անգլիայում հատարակա-
կան զօրեղ կարծիք կաղնվեց: Կառավարութիւ-
նը թէև չը չեղվեց իր ուղղութիւնից, բայց
հարկադրված էր նկատի առնել երկրի միջա-
մուռ ցանկութիւնը: 1877 թ. սկսվեց ուսու-
թիւրքական կոտորածը և Թիւրքիան անցաւ
Թիւրքիայի կողմը: Դարձեալ առաջ եկան հին
նախապաշարմունքները. դարձեալ խօսեցին Ռու-
սաստանի նուաճումների մասին: Ղազարոսն
ձայնի նշանակութիւն չու՜նեցաւ. թէև նա չա-
րունակում էր քարոզել, որ պատերազմը բարիք
է ճնշված քրիստոնեաների համար, բայց Բի-
կօնօֆիլդը, յենվելով հասարակաց կարծիքի վրա,
ամեն օգնութիւն հասցրեց Թիւրքերին: Իսկ երբ
ռուսները մօտեցան Կ. Պօլսին, Անգլիան իր
նաւերը ուղարկեց Մարմարա ծովը և պատե-
րազմի սպանալիքներ կարդաց: Անգլո-ռուսա-
կան պատերազմը անխուսափելի էր երևում: Եւ
եթէ նա տեղի չունեցաւ, մեծ պատճառներից
մէկը Ղազարոսն էր, որ քարոզում էր թէ այդ
պատերազմը մի մեծ չարիք կը լինի:

(Վր չարունակով)

լուր և աշխատելից կամարով մտնի քաղաքի ձորերը...

ՎԱՐԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Մեր հասարակությունը իր գիւղական գործերը և հասարակությունը իր գիւղական գործերը և հասարակությունը...

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՂԱՐԻՐՆԵՐԸ (Գաղթականների դրուվները)

Այս օրերս, Մուշից, Նախիջևանից և Խուսից Բաթում եկան նորեկ պանդուխտները...

«Մշուս ժողովուրդը անհասարկ վիճակ ունի. կառավարությունը իւրաքանչիւր սպարման 5 1/2 դրուշ տուրք կառնէ, այն ևս ողջ ստակ: Հա- կառակ պարագային, եթէ բան մը չը գտնենք...

«Այս տարի գարունը շատ շուտ եկաւ. մարտ ամսի 3-ից սկսեալ հայ գիւղացիներն յուսարեկ արտերով դուրս ելան տներէն ու սկսեցին լոծ- քին նայել, սերմանել ողջան կարելի կը լինի...

«Խուսի գիւղերը 100-ական ոսկի հանգա- նակը ու տուել են համանցի «Թուռն», ազնու- կան մի և նոյն ժամանակ հազարապետներ հա- մարակահասակներ: Թաղից, Սօֆի և Իւսուֆ աղա- ներին, որպէս զի իրանց գիւղերը պահպանեն...

«Խոզովի խմորները կատարվում են և խալթումը: Զատիկ առաջ շաբաթ օրը քրդերը ճանապարհին բռնելով մի քիւրդ չէլիկ կամենում են սպա- նել, բայց սպանութիւնը չը յաջողցնելով՝ մի- այն վիրաւորում են ու փախչում: Նա այս պատ- ճառով, հարկուրտար անմեղ խալթից հայերը...

«Բալաբալի դրուվները՝ արդէն գրելը անկա- ռող է նկարագրել: քրդական բարբարոսութիւն- ներն ու գաղանային նախնիներն, որոնք, օր- ցերեկով, աշխարհ կը կատարվին քամաղդ գիւ- ղերայումը, վերջ չունին: Բշարի տղան, այդ ա- ռիւնախում լսելը քիւրդը բնաւին տիրացել է Սոնալու գիւղին: Նոյն իսկ Կազ աւանի քա- յաղամը փախել է հրոյ ձեռքէն ու գնացել է Մուշ: «Աստուած հեռու տանէ, ասում էր բու- լանիցի պատմիչը արտասուելով: Նորապսակ հարսի առագաստը սկիզբը նա կը մտնէ, և, ա- մենայնապէս կոյսերին անմեղութիւնը նա կա- ուակէ...» Մէկ խօսքով, պատիւը, սրբութիւնը, ինչքը և կայքը անպարտք թիւրքերն ու արեւու- ռուտը քիւրդին քանահայրըն կը ծառայեն...»

«Մշուի եկեղեցին ի միջի այլոց պատմում են. «որ իրանը, եկեղեցիներ եղել են 150 հոգի, և երբ հասել են Մանազկերտի Դուռնու գիւղը, հաւաքել են մարդկային 2-ական արծաթ մէ- ճիւղ, և յանձնել են համանցի «էլադախ» Զը- թէ՛ի եղալը Ուրգալին» (որոնք նոյնպէս համի- ղական հաղարպետներ են), որը խաւրին յանձ- նել է իր ծառաներին ու սրանք էլ բերել են մինչև սահմանադրուել և իրանը վերադարձել:

Մինչդեռ խնուսցին, ընդհակառակը, ասում էր «Եթէպէտ մենք ևս բնաւ մարդիկ էինք և 20- ական դրուշ էլ խնուսում: Արդիւր գիւղում տուեցինք Այնու տղայ Խուսիցին՝ բայց նրա ծառաներն երբ մեզ հասցրին սահմանին մօտը...»

Մեր հարցին թէ ինչու էք գալիս, նրանք պատասխանեցին. «Դիւն անհրաժեշտ էր չը գտնե- րէր չէ կարելի այլ ևս ապրել, ստիպեալ գաղ- տադուի թողնում ենք ու փախչում: Ղուրբաթի երկիրները, գտնէ կրնանք հազար ճօրով օրական պարէնը ձեռք բերել և ապրել չոր հացով ազատ կերպով...»

«Բայց, դարձեւ եղբայրներ, պատասխանեցինք մենք, սխալվում էք, թէ չին և թէ նոր դարձե- րէր, չը կայ գերութիւն՝ քան պանդուխտները, և ստրկութիւն՝ քան գաղթականութիւնը: Օտա- րութեան մէջ մեզ համար ոչ փառք կայ և ոչ բաղադարութիւն, այլ միմիայն մեր սեփական հայրենիքում, պապական օջախում կարելի է...» Մենք, հողի հետ գործ ունեցողներս—երկրի մը- շակներս երբեք չենք կարող ուրիշ երկրի քա- ղաքներում որ և է գործ չնինք, բայց այն միակ ծառայութիւնը՝ որին «համար» են ասում, մեր փառքն ու վատասկը և եթ՝ այդ իշու հա- մէտն է: Նա այսպէս, թորակած տուն, տեղ, ճնուղ, գերդաստան, արտ ու անդաստան և որ- պէս «Թափառական իշուներ» չըլլում ենք և սփռուս աշխարհի՝ աստանդական կեանք վա- րելով: Իսկ հայրենիքը խոպանացաւ, ամայացաւ: Միթէ չը գիտենք ժողովրդական այն առածը թէ՛ «Երբեք զրախտ դառնայ՝ հայրենիքից քաղցը չի լինի»—առանց այն էլ դուրբաթի համը վարդը է փախել: Զէ, սիրելի հայրենակիցներ, լաւ է ուշ՝ քան երբեք: Պէտք է գնալ, գնալ ա- լերված մեր վաթմանը, սփոփել մեր եղբայր- ներին, քոյրերին ու մայրերին, և գտնէ մեռնել հայրենի հողում:

Մեր այդ խօսքերը լսելով, երեսուցի չափ պանդուխտներ, դուռները կախած, թախիծը դէմքերի պատած՝ սկսեցին «ախ ու վախ բաշել, և արցունքներ հեղեղել:

ՊԱՏԵՐԱՅՄ

Երկու կողմերը առ այժմ լուռ են. պատե- րազմական բեմում տեղի չունին փոքր ի շատէ նշանաւոր գործեր, եթէ չը հաշնեք մանր մուշ- րնդհարութիւնը: Ամերիկացիները սպասում են սպանիական նաւատորմին, բայց սա չէ երևում: Մինչև այդ, ինչպէս երևում է Սաբայի ափե- րում գործ ինչեղներ տեղի չի ունենայ:

Գերմանական լրագրիչները մէկը հաղորդում է, որ Սպանիայում շատ հեղափոխում կարող է պետական յեղափոխութիւն պատահել: Լրագրի թղթակիցը տեսակցութիւն է ունեցել յայտնի Էմիլ Կաստիլարի հետ, որ Սպանիայի առաջին հեռուօրն է և 1873—1874 թվերին սպանիական հանրապետութեան նախագահն էր: Կաստիլար ասել է թղթակցին. «Ամեն ինչ թեքվում է դէպի հանրապետութիւն հաստատելու միտքը: Այժմեան կարգը երկար չի դիմանայ կրեպինին, նա շատ հեռու է գնացել և վերադարձի ճանա- պարհ չունի»: Կաստիլար ասելացրել է, որ հանրապետութիւնը Սպանիայում շատ արմա- տական փոփոխութիւններ չի մտցնի: Թագուհին կը հեռանայ պալատից, ուր կը բնակվի հանրա- պետութեան նախագահը և այլ ևս ոչինչ:

Ամերիկական լրագրիչները հրաշքներ են գոր- ծում: Նիւ-Յօրքի երեք լրագրիչներ ոչինչ ծախս չեն ինչպիսի պատերազմի բեմից շուտ լուրեր ստանալու համար: Դրանցից մէկը շաբաթական 50,000 դոլար է ծախսում: Մանիլայի յաղթու- թեան պատճառով լրագրիչները ձրի կոնցերտներ, հրաձգութիւններ սարքեցին: Իւրաքանչիւր լուր, որ ստացվում է պատերազմի մասին, իո- կոյն տպագրվում է և տարածվում ահագին քա- նակութեամբ և բացի դրանից գրվում է ահա- գին սև տախտակների վրա, որոնք գրված են քաղաքի դռնապան տեղերում:

Մանիլայի խիստ պաշարված է. քաղաքում արդէն կերակրվում են ձիու մսով: Ծովապետ Դէվիս յոյս ունի, որ սպանիացիները երկար չեն գիւմանայ սովին:

ՆՄԵՆԻ ԱՊԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

«НОВОСТИ» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հետա- քրքրել տեղեկութիւններ է հաղորդում արաբա- կան այդ նահանգի ներկայ վիճակի մասին: Դեռ

30 տարի սրանից առաջ, սուլթան Աբդուլ-Ազի- ղի ժամանակ, Նմշում մեծ ապստամբութիւն ծագեց և թիւրքաց կառավարութիւնը ստիպվեց 30,000 զօրք ուղարկել և երկու միլիոն լիւրա ծախսել՝ այդ ապստամբութիւնը զսպելու հա- մար: Բայց անաշուկ:—Հալիւ կարելի եղաւ մի խախտու հաշտութիւն կայացնել արաբական ցեղերի, մանաւանդ վահաբիցիների հետ: Այժմ այդ ցեղերը, սրնէք ատում են թիւրքերին, որովհետև համարում են նրանց իրանցից ստոր և քիչամեղութեան յափշտակիչներ:—Նորից ոտքի են կանգնել: Թիւրքաց կառավարութիւնը կար- ծում է, որ արաբական այդ խռովութիւնները կատարվում են Անգլիայի թիկադրութեամբ, կարծում է, որ Արաբիայում բաղմամբ անգ- լիական գործակալներ կան, որոնք երկպառա- կութիւն և յուզմունք են սերմանում ու դրդում ժողովուրդը ապստամբելու: Սուլթան Համիդի թշնամական զգացումները դէպի Անգլիան սաստ- կանում են, մանաւանդ որ սուլթանը միշտ անգլիատեաց է եղել և հայկական խռովու- թիւններից յետոյ բացարձակ ատում է Անգլիան: Նորերս Մէքքայի գլխաւոր չէրիֆը ընդդիմացաւ և թղթ չը տուեց, որ Զէդդայում կարանտինա- յին միջոցներ ձեռք առնվին ծախտախտի պատ- ճառով: սուլթանը դարձեալ կասկածեց, որ Անգլիան է դրդում չէրիֆին և ստիպվեց 20,000 լիւրա ոսկի վճարել չէրիֆին, որպէս զի նա դը- ժուարութիւններ չը յարուցանի: Բայց այժմ մի նոր դժուարութիւն է ծագել. բէդուինները զը- խաւորը, որ նոյնպէս նշանաւոր անձնաւորու- թիւն է, կամենալով ինքն ևս այդ ոսկիներից մասն ստանալ, համաձայնութիւն է կայացրել չէրիֆի հետ և հրաժարվում է առաջնորդել ուխտաւորներին դէպի սուրբ տեղերը: Բ. Գուռը ստիպվեց նորից ոսկիներ ուղարկել և յազցնել չէրիֆի և բէդուինների դրդոված անորոշակը: Սուլթանը անկարող է պատժանել անել Մէք- քայի չէրիֆին, որովհետև Արաբիայում նա շատ հօր է և ստիպված է շոյել նրան: Միայն այս օրերս նա ուղարկեց Նմշու ութ պաշտօնեաներից բաղկացած մի յանձնաժողով, որ պէտք է վե- րակազմի նահանգի ամբողջ վարչութիւնը: Սա- կայն, ասում է թղթակիցը, կաշառակերութիւնը և դեղձումները այնքան խոր արմատ են գցել մուսուլման երկիրները բարքերի մէջ, որ ա- մենք նման են միմեանց այդ կողմից և բոլո- րովին անօգուտ է սպասել, թէ կարող է տեղի ունենալ որ և է փոփոխութիւն դէպի լաւը:

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

Պօստօն, մայիսի 4-ին Դիշեր-ցիբիկ պատերազմի վրա կը խորհնեք, պատերազմ կերակրեն: Այս համաճարակէն ոչ ոք ազատ է, նոյն իսկ գիտուններու ուղեղին սովորական գործը խանդավառ է մարդ սպա- նելու գաղափարով: Մի քանի օր առաջ «Նիւ- Յօրք ձըրնը» օրաթերթը (վարչկենտրոնը ըսել կուզէի) 1000 դոլարի մրցանակ խոստացաւ ա- մենէն աւելի աւելից պատերազմական նոր գոր- ծիք մը հարողին: Երեսընէն սկսեալ մինչև ա- մենացետին գործաւոր կաշխատեն այդ բազմա- ցեակ մահու մեքենան չինը: Ինչ բարի մարդիկ էին մեր նախնիքը, որ մահը մանկաբույժը կը վնէին: 19-րդ դարու դարակերպիչները երե- րական կոծակ մը միայն կուտան անոր կը- մարը մասններուն: Ո՞րքան անհայտ է մանկաբու- ղադատմամբ գիտական վէճերուն, որոնք վայր- կենի մը մէջ աւելի կեանքը կը հնձնին, քան սուրբ ամեններու միջոցին:

Կիրակի օր թերթերու մէջ դարմանքով կար- դացի Նիկոլայի Ռէյզլիի հետեալ յայտարարու- թիւնը: «Պատերազմական եղբորական մեքենայ մը կատարեալագործելու վրա եմ, որ պիտի նու- ընմ կառավարութեան: Այդ մեքենան այնպիսի ստակալի ուժ մը պիտի արտադրէ, որ կարենայ շատ հեռուէն վնասել պատերազմական նաւեր և ցամաքային բանակները: Եթէ այս հնարքը ըն- դարձակ աստիճանով գործէ, ինչպէս կը գործէ իմ աշխատութեան սենեակս, արդիւնքը ան- հաշուելի պիտի լինի, երբ գործածութեան դրուի, նա պատերազմը պիտի վերջացնէ իր աւերիչ ուժերու անսահման մեծութեամբ: Երկար ժա- մանակ է, որ գիտեի թէ ինչպիսի նախագահին խաղաղութիւն պահելու մեծ ջանքերուն, պատե- րազմը պիտի պայթի, այն օրէն իմ մօքի բոլոր ուժը կենսաբանական այս հնարքը կատարեա- ցործելու և զայն անմիջապէս գործածելը դարձ- նելու: Դրականապէս, այս է միակ պատճառը, որ մինչև հիմա կառաւոր գրտած չեմ:

Այս տողերը գրողը աշխարհահռչակ եղբորա- ղէտ Ռէյզլան է, որուն անունը ու է յայտարա- րութեան արժէք կրնայ տալ. Ռէյզլան հնարինն է անհամար եղբորական մեքենաներու, որոնք ի- րենց նրբութեամբ, ճշգրտութեամբ և ինքնաբոյն

ամբողջութեամբ ծանօթ են գիտական աշխար- հին: Ռէյզլան Էդիսոնի պէս շահագէտ մը եղած չէ, մեքենաներով դրամ չահելէ աւելի գիտու- թեան ծառայելը քրած է իր նպատակը: գործնա- կան հնարին համարաւն աւելի մեծ համբաւ մը ստեղծած է գիտութեան հանելուկները բացառ- րելու հանձնարով:

Ռէյզլայի բարեկամներէն մին յօդուածով մը կը բացատրէ մեծ եղբորազգէտն աշխատու- թեան ուղղութիւնը և յաջողութեան մօտաւորտ հաւանականութիւնը: Մերունի գիտունը Տինգ տարին ի վեր փորձեր կը կատարէր առանց թիկի կամ ու է հազարակցութեան հեռագիրը դարձել ամեն ուղղութեամբ: Այս հրաշալի հե- ուագրին մեքենան, որոյ կազմութիւնը գաղտնիք մը է, իր հնարինն եղբորական ձօճանակ կը կոչուի. այդ նորօրինակ ձօճանակը կարտադրէ եղբորական ալիքներ՝ նման այն ալիքներուն, որ լծի մը մէջ կեննեն, երբ քար մը նետու հոն, մեքենան կը լինի կենդանի այդ ալիքներուն. որ- քան զօրաւոր լինի մեքենան, այնքան հեռու կերթան ալիքները. ալիքներուն չըլճանին մէջ դրուած ընդունարան մը կրնայ այդ շարժումը արձանագրել: Այս ձօճանակով և ընդունարանով Ռէյզլան յաջողեցաւ 12 մղոն հեռու հեռագրել առանց թիկի: Այդ օրէն եղբորազգէտը կաշխա- տի այդ սահմանը ընդարձակել և վերջին փոր- ձերով համոզուած է, որ շուտով հնար պիտի լինի աշխարհի կենդանի հոսանքները դրկել: Ռէյզլան լրջօրէն կը հաւատայ, թէ շատ չանցած այդ ձօ- ճանակով կարելի պիտի լինի նոյն իսկ յարաբե- րութիւն հաստատել Հրատ մուրալին հետ, եթէ նա իմացական բնակիչներ ունի:

Ներկայիս սակայն ձօճանակը ոչ Հրատին և ոչ ալ ուրիշ մարդոց հետ յարաբերել կուզէ. Ռէյ- լան կուզէ եղբորական ալիքները դրկել սպա- նիական մարտանաւերու և բանակներու: Դատ դիւրին պիտի լինի այդ ալիքներով սպանիա- կան նաւերու վտօօրը և զինամթիւր պայթեցնելը կըսէ եղբորազգէտն մեքենայ մը պահէին, բայց քանի որ այդ անկարելի է, Ռէյզլան այսօր կաշ- խատի երկու մեքենան միացնել, այնպէս որ կարելի լինի միայն իր ձօճանակով եղբորական ալիքներ կենդանացնել ուղած կէտին վրա: Այս փորձերն է, որ կը կատարէ նա իր Նիւ-Յօրքի լուս աշխատանոցը: Թէ այդ փորձերը իրաւ պիտի յաջողին պատերազմի ստակալի մեքենայ մը ալ երեսն հանելու, կամ պատերազմը վեր- ջանալէ առաջ կարելի պիտի լինի զայն գործա- ծել, այդ է, որ անձկութեամբ կը սպասեն ամե- նը գիտնալ: Հնարին կարծիքով աւելիչ ձօճա- նակը շատ դիւրաւ պիտի կրնայ հեռուէն պա- յեցնել նաւահանգստի ու բոլոր ականները և թորփէլները, ինչպէս նաև թշնամոյն վառ- օ դարանները, զինամթիւր և այլն, ցամաքի վրա, այսպէսով մի քանի վայրկեանն բանակ մը կը դրկուի իր ամբողջ ուժէն: Այս է, որ մեծանուն հնարչին յուսալ կուտայ, թէ իր այս գիտով պիտի յաջողի պատերազմը վերցնել աշխարհէն իր բոլոր ստականներուն հետ:

Գանի տարին ի վեր սակայն նոյն խոստումը կը լսնիք գիտութիւնէ. ամեն աւելիչ բաղադրու- թեան կամ գորաւոր հրանոթներու գտնուած պահուն մարդկութեան աւետիս կուտան, թէ արկահեղութեան չըլճանը պիտի փակուի, մար- դիկ զազաններու նման ալ իրար չը պիտի փա- րատեն: Սակայն պատերազմը այսօր դոյզութիւն ունի իր բաղմնապատկեալ սարսափներով. դիմա- միթը, թորփէլներ, հակա թնդանոթները, կար- կուտի պէս կուտար գնառակներ տեղացող մաք- սիմները դեռ չը կրցան սարսափեցնելով վերց- նել պատերազմը: Հին բարոյագէտները գուշա- կեցին, թէ սէրը վախճան պիտի տայ մեծաքա- նակ մարդապաշտութեան. ներկայ գիտութիւնը կըսէ՝ սէրը չը կրցաւ, վախը, սարսափը պիտի վերջացնէ պատերազմը: Սակայն մինչև հիմա և դեռ չի հիմա նոյն իսկ այս տողերս գրած պա- հուն, որ սպանիացիք ու ամերիկացիք վիրաւ յօշոտեն կատարած գաղաններու նման...

ՆԱՄԱԿ ՊԱՏԱՐԱՍՏԱՆԻՑ

Ի ոյ, ապրիլի 22-ին Շահխաթից եկող ճամբորդները տխուր լուր են պատմում Սրբաթի եղբորմը մնացող գաղթա- կանների մասին, որոնք վերջերս արտաքսվելով Մակուից: Մարտի 28 էր, երբ տեղական ժողովը- ղի զրդււթած պահանջմամբ՝ ստիպեցին դուրս հա- նել գաղթականներին, որոնք պաշտպանվում էին շվեդացի ձօյերի ուղարկած նպաստներով: Մի ամիս է, որ մնում են գետեզերքում՝ բացօդայա- րադիպած են 60 անձերից, մեծ մասը կին ու երեխայ են: Ինչպէս այժմ երկու երեսայ մեռած են, մայրերը իրանք են խաղել. քահանայ չը կայ:

2—3